ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/25

ք. Երևան «15» 06 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սպիկա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 25823000 (քսանհինգ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուը այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Սպիկա>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Պուշկինի 43
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Յունիբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 24109000246000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02519153
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Ավագյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

«15» 06 **Հավելված N 1**
2020թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/25 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1.	22111110-74	Դասագիրք «Եզդիերեն այբբենարան»	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդիերեն այբբենարան» /1-ին դասարանի դասագիրք/, հեղ. Ա.Թամոյան, Հ.Թամոյան/ Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների յուրացման հնարավորություն-ներին: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա ստանալ տարրական գիտելիքներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետագայում ձեռք բերվելիք գիտելիքների համար: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է	հատ	720	4250	3 060 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				համապատասխանեցված լինի նյութին: Այբուբենի ուսուցումից հետո պետք է ներառվեն պարզ տեքստեր, որոնք կօգնեն ամրապնդել ստացած տարրական գիտելիքները: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
2.	22111110-75	Դասագիրք «Եզդի գրականություն» /5-րդ դասարան/	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդի գրականություն»/5-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ	հատ	644	4250	2 737 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից-բարդ սկզբունքով: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, այն, ինչը դժվար է ընկալել գրավոր խոսքով: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորող-ների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորու-թյուններին: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
3.	22111110-76	Դասագիրք «Եզդի գրականություն» /8-րդ դասարան/	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդի գրականություն» /8-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարո-ղությունների, հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով:Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների	հատ	635	4250	2 698 750	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան: Դասագրքի ձևավորումը պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Նկարները պետք է լինեն համադրված տեքստին: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
4.	22111110-77	Դասագիրք «Եզդի գրականություն» /9-րդ դասարան/	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդի գրականություն» /9-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:Պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումն. գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին:Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք	հատ	638	4250	2 711 500	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				դրանց նկատմամբ: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է նյութերն ու առաջադրանքները հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Նկարները պետք է լինեն նպատակային, համադրված տեքստին, ըստ անհրաժեշտության պետք է առկա լինեն համապատասխան մեկնաբանություններ: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գունները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
5	22111110-78	Դասագիրք «Եզդիերեն» /3-5-րդ դասարան/	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդիերեն» /3-5-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան/ <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքի բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ տարիքային խմբի չափանիշներին, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումն. գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա	հատ	1614	4250	6 859 500	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագիրքը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից՝ հարմար: Քերականական սահմանումներից զատ պետք է ներառվեն տեքստեր, որոնք կօգնեն կոնկրետ օրինակների վրա նյութն ըմբռնել: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
6	22111110-79	Դասագիրք «Եզդիերեն» /6-8–րդ դասարան/	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Եզդիերեն» /6-8-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումն. գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Քերականական սահմանումներից զատ պետք է ներառվեն տեքստեր, որոնք կօգնեն սովորողին կոնկրետ օրինակների վրա նյութն ըմբռնել: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին,	հատ	1625	4250	6 906 250	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի քերականությանը բնորոշ հստակ, բայց ոչ բարդ լեզվական ոճին համապատասխան: Դասագիրքը պետք է լինի յուրացման համար մատչելի: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 100 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
7	22111110-88	Դասագիրք «Քրդերեն այբբենարան»	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Քրդերեն այբբենարան» /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Մուսոյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, արժեքային համակարգի, հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Այբբենարանը պետք է սովորողներին հնարավորություն տա ստանալ տարրական գիտելիքներ, որոնք պետք հիմք հանդիսանան հետագայում ձեռք բերվելիք գիտելիքների համար: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Պատկերազարդումը պետք է գրավիչ լինի աշակերտի համար, հնարավորին չափ լինի ընկալելի: Պատկերազարդումը պետք է համապատասխանեցված լինի նյութին: Այբուբենի ուսուցումից հետո պետք է ներառվեն մատչելի ու փոքր ծավալի տեքստեր՝ ուսուցանված նյութն ամրապնդելու համար:	հատ	28	8500	238 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գունները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
8	22111110-8Ֆ	Դասագիրք «Քրդերեն 7»	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Քրդերեն 7» /7-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝Մամե Ալիխանե Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորող-ների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Նկարները պետք է լինեն նպատակային, համադրված տեքստին, ըստ անհրաժեշտության պետք է առկա լինեն համապատասխան	հատ	24	8500	204 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				մեկնաբանություններ: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 240 x 170 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գունները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
9	22111110-86	Դասագիրք «Քրդերեն 8»	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Քրդերեն 8» /8-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝Մամե Ալիխանե Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշիչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը:	հատ	24	8500	204 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 70 x 100 1/16 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					
10	22111110-87	Դասագիրք «Քրդերեն 9»	«Սպիկա» ՍՊԸ, ՀՀ	«Քրդերեն 9» /9-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Մամե Ալիխանե Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորող-ների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը: Տեխնիկական չափանիշները	հատ	24	8500	204 000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Չափսը՝ 70 x 100 1/16 Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ Կազմի գույները՝ 4+0 Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում Երեսպատումը՝ լամինացված					

<u>1-10- րդ չափաբաժինների համար</u>

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից ներկայացված **բաշխման ցուցակի:**

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ա. Ավագյան

«ՍՊԻԿԱ»
«СПИКА»
«SPIKA»
02519153
«Դ»

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաջորդական	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Դասագիրք «Եզդիերեն այբբենարան»	5	0	21	300	97	200	97	720
2	Դասագիրք «Եզդի գրականություն» /5-րդ դասարան/	3	0	20	300	94	130	97	644
3	Դասագիրք «Եզդի գրականություն» /8-րդ դասարան/	3	5	20	300	89	120	98	635
4	Դասագիրք «Եզդի գրականություն» /9-րդ դասարան/	3	5	20	300	82	130	98	638
5	Դասագիրք «Եզդիերեն» /3-5-րդ դասարան/	5	0	60	900	169	380	100	1614
6	Դասագիրք «Եզդիերեն» /6-8-րդ դասարան/	5	10	60	900	170	380	100	1625
7	Դասագիրք «Քրդերեն այբբենարան»	0	0	0	28	0	0	0	28
8	Դասագիրք «Քրդերեն 7»	0	0	0	24	0	0	0	24
9	Դասագիրք «Քրդերեն 8»	0	0	0	24	0	0	0	24
10	Դասագիրք «Քրդերեն 9»	0	0	0	24	0	0	0	24
ԸՆԴԱՄԵՆԸ		24	20	201	3100	701	1340	590	5976

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ա. Ավագյան

Հավելված N 2
«15» 06 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-20/25 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110-74	Դասագիրք «Եզդիերեն այբբենարան»	-	-	-	-	-	-	-	3060000	3060000	3060000	3060000	3060000	3060000
2	22111110-75	Դասագիրք «Եզդի գրականություն» /5-րդ դասարան/		-	-	-	-	-	-	2737000	2737000	2737000	2737000	2737000	2737000
3	22111110-76	Դասագիրք «Եզդի գրականություն» /8-րդ դասարան/	-	-	-	-	-	-	-	2698750	2698750	2698750	2698750	2698750	2698750
4	22111110-77	Դասագիրք «Եզդի գրականություն» /9-րդ դասարան/	-	-	-	-	-	-	-	2711500	2711500	2711500	2711500	2711500	2711500

5	22111110-78	Դասագիրք «Եզդիերեն» /3-5-րդ դասարան/	-	-	-	-	-	-	-	6859500	6859500	6859500	6859500	6859500	6859500
6	22111110-79	Դասագիրք «Եզդիերեն» /6-8-րդ դասարան/	-	-	-	-	-	-	-	6906250	6906250	6906250	6906250	6906250	6906250
7	22111110-86	Դասագիրք «Քրդերեն այբբենարան»	-	-	-	-	-	-	-	238000	238000	238000	238000	238000	238000
8	22111110-85	Դասագիրք «Քրդերեն 7»	-	-	-	-	-	-	-	204000	204000	204000	204000	204000	204000
9	22111110-86	Դասագիրք «Քրդերեն 8»	-	-	-	-	-	-	-	204000	204000	204000	204000	204000	204000
10	22111110-87	Դասագիրք «Քրդերեն 9»	-	-	-	-	-	-	-	204000	204000	204000	204000	204000	204000
ԸՆԴԱՄԵՆԸ										**25823000**	**25823000**	**25823000**	**25823000**	**25823000**	**25 823 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

Ա. Ավագյան